

ԼԻՔԱՆԱՆԵԱՆ ՄԱՄՈՒՒՆ ԽՈՐԱԳԻՐՆԵՐ

Ստորեւ կը ներկայացնենք Երկուշաբթի, 28 Յուլիս 2008-ի առաւօտեան լոյս տեսած լիբանանեան մամուլի գլխաւոր խորագիրները:

ՆԱԿԱՐ



Նեսիպ Լահուտ եւ Թարեք Միթրի կը հակադարձեն Յոզ-պալլայի սպառնական արտայայտութիւններուն: Բանալէճե-րու մագլցումը կը հասնի կառավարութեան աշխատանքային ծրագիրը մշակող յանձնախումբին նիստերուն:

Ճոմպլաթ կը փորձէ չեզոք դիրքերու վրայ մնալ եւ կը վե-րադառնայ Պաղեստինի ու արաբականութեան լոզունքներուն: Եգիպտոս երկխօսութեան կողմէն կ'որոշէ Յամասին ու Ֆաթըհին: Բայց, վերջիններս զբաղած են փոխադարձ ձեռքարկութիւններով:

ԱՆՈՒՒՐ



Կառավարութեան աշխատանքային ծրագիրը մշակող յանձնախումբին անդամներուն միջեւ բանալէճերը կը զարգա-նան: Նեսիպ Լահուտ իր դժգոհանքը կ'արտայայտէ Ռաատի սպառնալիքներէ:

Ճոմպլաթ միջին եզր մը կ'առաջարկէ կառավարութեան աշխատանքային ծրագիրին շուրջ:

ՄՈՒՄԹԱՔՊԱԼ



Լիբանանեան բանակը Թապպալէի մէջ բախումներ կ'ու-նենայ Զարամի գիւնեակներուն հետ:

Թրիփոլիի մէջ սպահովութիւնը վերականգնելու ծրագի-րը աստիճանաբար գետնի կը շահի:

Կառավարութեան աշխատանքի ծրագիրը մշակող յանձ-նախումբը կը քննարկէ Դիմադրութեան զենքը եւ կը մերժէ Յոզ-պալլայի սպառնալիքները:

Իսրայէլ կ'ըսէ, թէ Յոզպալլա՝ այս անգամ պիտի պատրու-կէ Լիբանանի օդային տարածութեան մէջ իսրայէլեան օդանա-ւերու թռիչքը:

Ապպաս կը յայտարարէ Եգիպտոսի հովանաւորութեան տակ միջ պաղեստինեան երկխօսութեան մեկնարկը:

ՍԱՖԻՐ



Կառավարութեան աշխատանքային ծրագիրը յանձնա-խումբին անդամներուն միջեւ մագլցող բանալէճերու դուռ բա-ցած է:

Յամասի եւ Ֆաթըհի միջեւ բախումները կը շարունակուին:

ԼԻՈՒՒ



Լիբանանեան բանակը կը ձեռքարկէ Արուրը:

Յեռնաձայնային հաղորդակցութիւն մը Սըլէյմանի եւ Սի-նիորայի միջեւ:

Կառավարութեան աշխատանքային ծրագիրը քննարկող յանձնախումբին անդամներուն միջեւ բանալէճ: Խորհրդարա-նական մեծամասնութեան անդամները կը քննադատեն Ռաատի յայտարարութիւնները: Նեսիպ Լահուտ, Ռաատն կը պահանջէ ետդարձ կատարել իր յայտարարութիւններէն:

Ռալիտ Մուալլէմ այսօր կ'այցելէ Թեհրան:

ՏԻԱՐ



Ճոմպլաթ կ'ըսէ, թէ դիմադրութիւնը առանցք մըն է Ապտըլ Նասրընէ, դեպի Զամալ Ճոմպլաթ, հասնելով՝ Յասան Նասրալ-լային:

Ճոմպլաթ կը յայտարարէ, թէ ոչ մէկ առնչութիւն ունի «Դա-մասկոսի Գարուն» կազմակերպութեան հետ եւ կ'աւելցնէ, թէ Զիրքուքի Նաֆթը Թրիփոլի կը հոսի ընտրական Նպատակնե-րով:

ՀԱՅԱԹ



Աստիճանական լռութիւն Թրիփոլիի մէջ: Կառավարու-թեան աշխատանքային ծրագիրը մշակող յանձնախումբին ան-դամներուն միջեւ տարակարծութիւնները կը խորանան:

Յամաս կը սկսի ձեռքարկել Ֆաթըհի անդամներ, իսկ Ֆաթըհի կը հակադարձէ:

ՇԱՐԲ



Լիբանանեան բանակը Թրիփոլիի մէջ կը ձեռքարկէ Յոզ-պալլայի կողմէ մարդուած հինգերորդ զօրասիւնի անդամ պա-տասխանատու մը:

Կառավարութեան յանձնախումբը չի կրնար համաձայ-նութիւն գոյացնել Յոզպալլայի զենքին շուրջ:

Ճոմպլաթ կ'առաջարկէ միջին լուծում մը գտնել կառավա-րութեան եւ Յոզպալլայի զենքին միջեւ:

ՇԱՐԲ ԱՌԻՍԱԹ



Լիբանանեան բանակը ձեռքարկութիւններ կը կատարէ Թապպալէի մէջ:

Կառավարութեան աշխատանքային ծրագիրը մշակող յանձնախումբը ինտերոյդ անգամ ըլլալով կը ձախողի համա-ձայնութիւն գոյացնել Յոզպալլայի զենքին շուրջ:

Թուրքիա հիկզ սենարիոներու առջեւ: Եօթ դատաւորներ պիտի վճռեն Երտոզանի ճակատագիրը:

ՊԱՅՐԱՔ



Ճոմպլաթ կ'ըսէ, թէ ամուսնալուծումը անհնար է եւ ան-հրաժեշտ է Յոզպալլայի հետ հասնիլ դրական եզրի մը:

Նախագահ Սըլէյման՝ Սիւնիորայէն ու Պըրրիէն, ինչպէս նաեւ այլ պատասխանատուներէ պահանջեց անպարտել կա-ռավարութեան աշխատանքային ծրագիրին մշակումին մէջ:

Թրիփոլիի մէջ տիրող աստիճանական հանդարտութիւնը խանգարուեցաւ Պեպ Թապպալէի դէպքերուն հետեւանքով:

Թարեք Միթրի կը բացայայտէ լուրջ տարակարծութիւննե-րու առկայութիւնը, ինչպէս նաեւ՝ փոխադարձ անվստահու-թեան մթնոլորտ մը:

Կառավարութեան աշխատանքի ծրագիրը կազմելու հա-մար վճռական շաբաթ մը: Յամաձայնութիւն կամ առձակատում:

ՀԱՅ ԱԿԵՏ. ԳՈԼԵՃԻ 100 ԱՌ 100 ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ ՊՐԵՎԵԻ ՊԵՏԱԿԱՆ ԸՆՆՈՒԹԵԱՆ

Հայ Աւետ.Գոլէճի Տնօրէնութիւնը ուրախութեամբ կը յայտ-նէ թէ իր պրեվէ 9-րդ դասարանի ամբողջութիւնը ներկայացը-նող 7-ը աշակերտներէն 7-ն ալ յաջողած են պետական պրե-վէի քննութեան, արձանագրելով 100 առ հարիւր յաջողու-թիւն:

Ստորեւ յաջողած աշակերտներուն անունները. Տօդէի Միստան (շատ լաւ յիշատակութեամբ), Արեգ Տաղը-եան, Զրիսթըլ Պապիքեան, Ռաֆֆի Մավլեան, Իման Ժապեր, Սերժ Զուլճեան եւ Ժոզէֆ Գորտմոսեան:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԱԿԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵՂՈՆԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Աստուծոյ փառք կու տանք եւ ուրախութեամբ կը յայտա-րարենք, թէ վարժարանիս 2007-2008 դպրոցական տարեշը-ջանը ամբողջացնող պրեվէի պետական քննութեան մասնակ-ցող 18 աշակերտներէն 14-ը յաջողած են, 2-ը լաւ յիշատակու-թեամբ:

Ստորեւ կը ներկայացնենք անունները. Գիտոյեան Մարիա Լեւան (լաւ), Գևտոյեան Կարինէ, Գոճայ-եան Լիւսի, Խաչատուրեան Թեոփ, Կեօքճեան Նարինէ, Հար-ֆուշեան Յակոբ, Մանիսալեան Յենրի, Յարութիւնեան Արշ-Սարիս, Պոյամեան Փաթիլ, Սանթուրեան Մակի, Տեօտիլեան Սեպուհ, Տեօվլեթեան Յովսէփ (լաւ), Զելուկեան Սերո եւ Ֆու-տուլեան Մեղեդի:

Կը շնորհաւորենք մեր աշակերտները, անոնց ծնողներն ու դասատուները:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՄԵՍՐՈՊԵԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ՊՐԵՎԵԻ ՊԵՏԱԿԱՆ ԸՆՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Գոհունակութեամբ կը հաղորդենք, որ Հայ Կաթողիկէ Մես-րոպեան Բարձրագոյն Վարժարանի 9-րդ դասարանի 35 աշա-կերտներ յաջողեցան պրեվէի պետական քննութիւններուն:

Մեր աշակերտներէն 3-ը (Սարգիս Հալաճեան, Փաթիլ Մար-սիմ եւ Մարիամ Սերայտարեան) արժանացան «շատ լաւ» յի-շատակութեան, ինչպէս նաեւ անոնցմէ 5-ը (Սեւան Գուրումըլ-եան, Մելքոն Էլէճեան, Միլիա Սինթա Նաժար, Թանիա Տիպ եւ Լիւսի Չոմճեան) արժանացան «լաւ» յիշատակութեան:

Անդրանիկ Պոյաճեան, Վիգէն Ծուֆայեան, Տանի Ուսնիկ, Ընթրքա Իսա, Մարիա Սուլեյման, Արտաշէս Պողոս, Փաթիլ Տու-մանեան, Գարոլին Հաճեան, Ռուբինա Թովմասեան, Ստե-ֆանի Սեօրիսեան, Յելենա Եմէնեան, Յոլին Շահինեան, Սար-գիս Գոճայեան, Ռիթա Ֆերմանեան, Նարայի Ազար, Անդրա-նիկ Գասպարեան, Փամելա Թէքերեան, Հայկ Ազարեան, Ժոզէֆ Զարամ, Ստեֆանի Աճմեան, Սօս Պապեթեան, Ալին Սապուճեան, Շանթ Եճիտեան, Լարա Շամուն, Սարգիս Մար-տիրոսեան, Մարիա Զասիս եւ Գեորգ Էդոյեան:

Կը շնորհաւորենք մեր աշակերտները իրենց յաջողութեան համար, ինչպէս նաեւ իրենց ծնողներուն եւ շնորհակալութիւն՝ մեր ուսուցիչներուն:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՄԵՐՈՊՍԵԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

ՇՆՈՐՀՎՈՐՈՒԹԻՒՆ

Օրդ. Նազելի Զէնտիմեանի ընդ պր. Ռաֆֆի Պեզճեանի նշանախօսութեան ուրախ առիթով, Նոր Հաճնոյ Ս. Գեորգ եկեղեցւոյ թաղականութիւնը, տիկնանց միութիւնը եւ Գայիա-նէ երգչախումբը կը շնորհաւորեն խօսեցեալ գոյզը եւ անոնց ընտանեկան պարագաները, մասնաւորաբար տեր եւ տիկ. Վազգէն եւ Թամարա Զէնտիմեանները:

ՍՈՒՊԱՐԱՔ ԿԸ ՀՈՎԱՆԱԴՈՒՐԵ ՄԻՋ-ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ՀԱՇՏՈՒԹԻՒՆ ՄԸ

Եգիպտոսի նախագահ՝ Հիւսնի Մուպարաք եւ պաղեստինե-ան իշխանութիւններու նախագահ՝ Մահմուտ Ապպաս, Գա-հիրի մէջ ունեցան հանդիպում մը: Երկու ղեկավարները քնն-նարկեցին իսրայէլ-պաղեստինեան հակամարտութիւնը եւ իս-րայէլացի պահեստային ճիւղի ճախարհագրական արձակման պա-րագան:

Հանդիպումէն ետք, Մահմուտ Ապպաս յայտարարեց, թէ նա-խագահ Հիւսնի Մուպարաքին հետ համաձայնութիւն գոյացած էր, Եգիպտոսի հովանաւորութեան տակ սկսելու պաղեստինե-ան ազգային երկխօսութեան: Ապպաս նաեւ ակնարկեց Կա-զայի շրջանին մէջ արաբական ուժեր տեղակայելու հնարաւոր-ութեան մը:

Գետնի վրայ Համաս եւ Ֆաթի կը պատրաստուին պաղես-տինեան արհմը թափելու նոր հանգրուանի մը: Արդարեւ, Հա-մաս կ'ամբաստանէ Ֆաթիը Կազայի մէջ պատահած պայթու-մներուն պատասխանատուութեամբ: Ֆաթի կը մերժէ: Համաս սկսած է ձեռքարկել Ֆաթիի անդամ եւ համակիր տասնեա-կաւոր քաղաքացիներ:

Համասի աղբիւր մը երկն հաղորդեց, թէ վարչապետ Իսմայիլ Հանինէ վիրաբուժական յաջող գործողութեան մը ենթարկուելէ ետք, այժմ վերադարձած է իր սովորական աշխատանքին:

Աղբիւրը որեւէ ակնարկութիւն չկատարեց գործողութեան բնոյթին մասին, ոչ ալ՝ թուականին:

Ս.Դ.Հ.Կ. ԸՆԿԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԿԵՂՈՆ

Ս.Դ.Հ.Կ. Ընկերային Ծառայութեան Գրասենեակը (Նոր Հա-ճնոյ), կ'օժանդակէ քաղաքացիներուն զանազան տեսակի կարիքներուն:

Ընկերային Ծառայութեան գրասենեակը բաց է ամէն օր, բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն, առաւօտեան ժամը 9:00-էն մինչեւ երեկոյեան՝ ժամը 4:00:

Յաւելեալ մանրամասնութեանց եւ կապ հաստատելու հա-մար կրնանք հեռաձայնել՝ 01-444738 թիւին:



Հայաստանեան Ֆութպոլ ԲԱՆԱՆՑ-ՄԻՔԱ 0-1

Հայաստանի ֆութպոլի ընթացիկ եղանակի փոփոխու-թեան մրցաշարքի 7-րդ հանգրուանէն (30 Մայիսէն) յետաձգ-լած մրցումի մը ընթացքին, Բանանց 0-1 արդիւնքով պարտու-թիւն մը կրեց այցելու Միքայի դիմաց: Հանդիպման միակ կողմ նշանակեց Տա Սիլվան, մրցումի 30-րդ վայրկեանին:

Այս յաղթանակին շնորհիւ, Միքա երկու աստիճանի մագըլ-ցում մը արձանագրելով, գրաւեց ընդհանուր դասաւորման աղիւսակին երկրորդ դիրքը, 27 կէտերով, առաջատար Արա-րատէն 2 կէտ նուագ եւ մէկ մրցում պակաս ունենալով: Փոխիկ եւ Բանանց (24-ական միտուր) մէկական աստիճան նահան-ջեցին եւ կը գրաւեն յաջորդաբար 3-րդ եւ 4-րդ դիրքերը:

ՄԱՐԶԱԿԱՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

Յ33-ամեայ հեծելաձուլորդ՝ Գարոս Սասթըր իր ասպարե-զին մէջ առաջին անգամ ըլլալով շահեցաւ Ֆրանսայի հեծե-լարշաւի մրցաշարքը: Նշենք, թէ յաջորդաբար երրորդ տարին ըլլալով հանրաժանօթ մրցաշարքին յաղթողները կ'ըլլան սպա-նացիներ:

Գերմանիա տիրացաւ ՈՒԵՖԱ-ի Երրորդայի 19 տարեկանէն վար կրտսերներու ֆութպոլի փոփոխութեան տիտղոսին:

Աւարտական մրցումին, Գերմանիա՝ 3-1 արդիւնքով պար-տութեան մատնեց Իտալիան:

Թենիսի մէջ, Ռաֆայէլ Նատալ շահեցաւ Թորոնթոյի մի-ջազգային մրցաշարքը:

Փեքինի մէջ կատարուեցաւ ռոհմպիական քաղաքին բա-ցումը: Սոյն քաղաքը, Ռոհմպիական հաղերու ընթացքին պիտի հիւրընկալէ աւելի քան 16 հազար մարզիկներ:

Սինեմաշխարհ

ԱՐԱՔԱԿԱՆ ՖԻԼՄԱՐՈՒԵՍԸ ԿՈՐԱՆՑՈՒՅ ԵՈՒՄԵՅ ԸԱԿԻՆԸ

Արաբական ֆիլմարուեստը եւ եօթերորդ արուեստի աշ-խարհը երկ կորսնցուցին հանրաժանօթ բեմադրիչ Եուսէֆ Շահինը:

Լիբանանցի ծնողներէ, Գահիրի մէջ 1926-ին ծնած Եուսէֆ Ճեպրիլ Շահին, արաբական ֆիլմարուեստի երկնակամարին վրայ փայլեցաւ շնորհիւ իր կողողային ժապաւեններուն, ինչ-պէս՝ «Ալ Ասֆուր»-ը, «Իսթեմտերիլէ ԼԷ»-ն եւ այլ գործերով: Ա-ւելի քան 60-ամեայ ասպարեզին ընթացքին ան պարգեա-տուեցաւ արաբական եւ միջազգային բազմաթիւ մրցանակ-ներով: Ան 82 տարեկան էր:

ՀԵՏԱՔՐՔՐԱՍԵՐԻ ԱՆԿԻՆ

ԱԼ ՓԱԶԻՆՍՈ ՄՈՍԿՈՒՄՅԻ ՄԵՋ

Աշխարհահռչակ դերասան՝ Ալ Փաչինօ մեկնեցաւ Մոսկուա: Ռուսիոյ մայրաքաղաքին մէջ, Ալ Փաչինօ պիտի ապրի չորս ամիս եւ այդ միջոցին պիտի նկարահանուի ժապաւենի մը մէջ:

Փոփ երաժշտութեան երգչուհի Պրիթի Սփիրդի մայրը՝ Լին Սփիրդ խոստովանեցաւ, որ շուրջ երեսուն տարի առաջ՝ երբ քսան տարեկան էր, իր ինքնաշարժին անիւններուն տակ սպան-նած է 12-ամեայ անչափահաս մը: Ան պարզապէս ափսոսաց պատահարին եւ ուրախութիւնը արտայայտեց, որ հետագըն-դումի չէր ենթարկուած:

Լոստոնի մէջ, յառաջիկայ օրերուն աճուրդի պիտի հանուի 4-րդ դարէն մնացած, լատիներէն բնագիրով Նոր Կտարականի նմոյ մը: Հնարարներու կարծիքով, կ'ենթադրուի, որ աշխարհի վրայ գոյութիւն ունեցող Նոր Կտարականի ամենահին նմոյնն է:

ՅԱԿՎԿՑՈՒԹԻՒՆ

Եփրաթի Ռուշանեան Կեպելեանի մահուան տխուր առի-թով, Նոր Հաճնոյ Ս. Գեորգ եկեղեցւոյ թաղականութիւնը, տիկ-նանց միութիւնը եւ Գայիանէ երգչախումբը խորապէս կը ցա-ւակցին ողբացեալի ընտանեկան պարագաներուն եւ հարա-զատներուն, ի մասնաւորի տեր եւ տիկ. Ժագ Ս. Երկաթ եւ Ժագլին Տեմիրճեաններուն:

ՅԱԿՎԿՑՈՒԹԻՒՆ

Համբարձում Սարաֆեանի մահուան տխուր առիթով, Նոր Հաճնոյ Ս. Գեորգ եկեղեցւոյ թաղականութիւնը, տիկնանց միութիւնը եւ Գայիանէ երգչախումբը կը ցաւակցին ողբա-ցեալի ընտանեկան պարագաներուն եւ հարազատներուն:

ARARAD DAILY NEWSPAPER
 Tel. - Fax: 01-56 55 99
 P.O.Box: 175275 MAR MIKHAEL, BEIRUT - LEBANON
 Website: www.araraddaily.org e-mail: ararad@terra.net.lb
 جريدة يومية سياسية أرمنية
 تصدر عن شركة ماسيس للطباعة والنشر (ش.م.م.)
 المدير المسؤول: ابيسوغوم كريسچيان